# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 355-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«___» _____ 2026 թվականի N _____Լ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 355-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Կառավարությունը որոշում է.

1? Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Տնտեսության արդիականացման նպատակային ծրագրերը հաստատելու մասին» N 355-Լ որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին կետով?

«4.1. Տնտեսվարողները կարող են տեղափոխել իրենց գործող վարկերը/լիզինգները մի ֆինանսական կազմակերպությունից մեկ այլ ֆինանսական կազմակերպություն։ Վարկի/լիզինգի տեղափոխման դեպքում սուբսիդավորումը շարունակվում է սույն ծրագրով սահմանված պայմաններով։»?

2) 5-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ?

1) նոր (չօգտագործված) մեքենասարքավորումների գնում կամ ներմուծում, որոնք օգտագործվելու են Հայաստանի Հանրապետության տարածքում

(այսուհետ՝ մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասեր)։ Սույն ենթակետով սահմանված մասով բացառություն են կազմում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների Հ «ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» բաժնի 51 դասի 51.1–51.2 խմբերին և դրանց ենթախմբերին համապատասխան գործունեության տեսակները։ Սահմանված բացառության շրջանակներում «նոր (չօգտագործված) օդային տրանսպորտային միջոց» է համարվում օդային տրանսպորտի այն միջոցը, որն արտադրվել է վերջին հինգ (5) տարիների ընթացքում, ունի գործող թռիչքի պիտանիության վկայական (certificate of airworthiness), գտնվում է տեխնիկական և շահագործային պիտանիության վիճակում՝ առանց թռիչքների ժամանակավոր արգելանքի կամ անվտանգության հետ կապված սահմանափակումների, և անցել է արտադրողի կամ միջազգային սերտիֆիկացված կազմակերպության կողմից իրականացված թռիչքային պիտանիության ստուգում (airworthiness review) ու երաշխավորված է անվտանգության միջազգային չափանիշներին համապատասխանությամբ։?

3) 5-րդ կետի 4-րդ ենթակետի վերջում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) 5-րդ կետը լրացնել նոր՝ 5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ?

«5) «Զբոսաշրջության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված հյուրանոցային տնտեսության օբյեկտների կառուցման կամ վերակառուցման նպատակով իրականացվող կապիտալ շինարարություն Հայաստանի Հանրապետության մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի և ազատ տնտեսական գոտիների)՝ կապիտալ շինարարություն իրականացնող՝ ավելացված արժեքի հարկ վճարող կապալառու կազմակերպության ներգրավմամբ, պայմանով, որ ներդրումային նախագիծը համապատասխանում է նշված օրենքով սահմանված նվազագույն պահանջներին և ուղղված է զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականության առաջնահերթություններին։»?

5) 6-րդ կետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ?

«բ. սուբսիդավորում՝ մինչև 42 ամիս՝ բացառությամբ սույն ծրագրի 5-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված դեպքերի, որոնց համար վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման ժամկետը սահմանվում է մինչև 36 ամիս»?

6) 6-րդ կետից հետո լրացնել նոր՝ 6.1 և 6.2 կետերով՝ հետևյալ

բովանդակությամբ?

«6.1. Սույն հավելվածի 5-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված նպատակով տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտերի դեպքում ֆինանսական կազմակերպությունը հայտը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ սույն ծրագրի պահանջներին և զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականության առաջնահերթություններին համապատասխանության մասնագիտական գնահատման նպատակով։

6.2. Կոմիտեն հայտը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է մասնագիտական եզրակացություն։ Բացասական մասնագիտական եզրակացությունը հիմք է հանդիսանում ֆինանսական կազմակերպության կողմից տվյալ վարկի սուբսիդավորման շրջանակում ներկայացված հայտը մերժելու համար՝ ծրագրի պահանջներին չհամապատասխանելու հիմքով։»?

7) 9-րդ և 10-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հայաստանի Հանրապետության դրամով վարկի սուբսիդավորման չափերը, կախված նպատակից, հետևյալն են.

Աղյուսակ 1

| Նպատակը | Սու |
|---|---|
| Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի վարկ | |
| Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի լիզինգ | |
| Կապիտալ շինարարության վարկ | |
| Կապիտալ շինարարության լիզինգ | |
| Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման վարկ։ Արտադրողականության խորհրդատվության վարկ | |
| Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման լիզինգ։ Արտադրողականության խորհրդատվության լիզինգ | |
| Հայաստանի Հանրապետության մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի) հյուրանոցային տնտեսության օբյեկտների կառուցման կամ վերակառուցման նպատակով տրամադրվող վարկ | |

10. Արտարժույթով վարկի/լիզինգի սուբսիդավորման չափերը, կախված նպատակից, հետևյալն են՝

Աղյուսակ 2

| Նպատակը | Սու |
|---|---|
| Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի վարկ | |
| Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի լիզինգ | |
| Կապիտալ շինարարության վարկ | |
| Կապիտալ շինարարության լիզինգ | |
| Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման վարկ։ Արտադրողականության խորհրդատվության վարկ | |
| Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման լիզինգ։ Արտադրողականության խորհրդատվության լիզինգ | |
| Հայաստանի Հանրապետության մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի և ազատ տնտեսական գոտիների) հյուրանոցային տնտեսության օբյեկտների կառուցման կամ վերակառուցման նպատակով տրամադրվող վարկ | |

8) 15-րդ կետի աղյուսակում «D(ԴԻ) «ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ»» բառերը փոխարինել D(ԴԻ) «ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» (բացառությամբ 35.11.5 «Էլեկտրաէներգիայի արտադրություն արևային էլեկտրակայաններում»)» բառերով և նույն աղյուսակում կատարել լրացում՝ համաձայն նախագծի։

9) 15-րդ կետով սահմանված աղյուսակում կատարել հետևյալ լրացումը՝

«Տնտեսական գործունեության տեսակների «Գործունեության նպատակ» սյունակում «D (ԴԻ) ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» տողից հետո ավելացնել նոր տող՝

| | |
|---|---|
| E (Ի) 38.2 ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՈՉՆՉԱՑՈՒՄ | մեքենասարքավորումների և դրանց բ ձեռքբերում;<br><br>կապիտալ շինարարության իրան գործընթացների թվայնացման ծրագ արտադրողականության խորհրդատվությու |

10) 22-րդ կետի 1-ին ենթակետում «2023 թվականի տարեկան ծավալի» բառերը փոխարինել «նախորդ տարվա» բառերով:

2. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրերի շրջանակներում տրամադրված, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից հաստատված (դեռևս չտրամադրված) վարկերի և լիզինգի սպասարկումը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո շարունակվում է իրականացվել միևնույն պայմաններով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից: